ԲԺՇԿԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ՀՏԴ 338.48
DOI 10.56246/18294480-2022.12-15

ՍԱՐԳՍՅԱՆ ԼԻԼԻԹ
ԵՊՀ սերվիսի ամբիոնի ասիստենտ
էլփոստ՝ Lilit.argsyan@mail.ru
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՄԱՐԻԱՆՆԱ
ԵՊՀ սերվիսի ամբիոնի մագիստրոս
էլփոստ՝ mariannvard@gmail.com

Ռեկրեացիոն զբոսաշրջության գործունեության մեջ ձևավորվել է նոր ուղղություն՝ բժշկական զբոսաշրջությունը: Հոդվածը նվիրված է բժշկական զբոսաշրջությանը, նրա նույնականացմանը ռեկրեացիոն զբոսաշրջության հետ: Ներկայացված են տեսական ուսումնասիրությունները, որոնք հստակեցնում են բժշկական զբոսաշրջության առանձնահատկությունները, տրված են մի շարք սահմանումներ, նրա տարբերությունը ռեկրեացիոն զբոսաշրջությունից: Բժշկական զբոսաշրջության կոնցեպտը՝ որպես բժշկական նպատակով կատարվող ճանապարհորդությունների ամբողջություն, գրավում է նրանց, ովքեր հետաքրքրված են բարձրորակ և մատչելի առողջապահական ծառայություններով: Այն ստեղծում է նոր հնարավորություններ՝ ի լրումն զանգվածային զբոսաշրջության նշանակալի հաջողությունների: Դա այլընտրանք է, որը կարող է նպաստել զբոսաշրջային արտադրանքի դիվերսիֆիկացմանը և տնտեսական կարևոր դեր կարող է խաղալ առողջապահական բազմաթիվ խնդիրների լուծման գործում: Բժշկական զբոսաշրջության բարելավումը թույլ կտա ցածր եկամուտ ունեցող երկրներին մուտք գործել զբոսաշրջության համաշխարհային ինդուստրիա և զարգացման մեծ տեմպերով միտում ունի դառնալու զբոսաշրջության առաջատար ճյուղերից մեկը ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում՝: Այն նաև կարող է տնտեսական կարևոր դեր խաղալ առողջապահական բազմաթիվ խնդիրների լուծման գործում: ՀՀ-ի համար զբոսաշրջության հիմնական տեսակների մեջ բժշկական զբոսաշրջությունը կարևոր տեղ կարող է ունենալ, որը որա-

կյալ կադրերի և ռեսուրսների, ինչպես նաև շուկայում մրցակցային գներ-ի շնորհիվ ունի զարգացման մեծ հեռանկարներ:

Բանալի բառեր՝ *ռեկրեացիոն զբոսաշրջություն, բժշկական ծառայություններ, առողջապահություն, հիվանդություն զբոսաշրջություն:*

Խնդրի դրվածքը: Առողջության պահպանումը մերօրյա հասարակության համար կյանքի որակը բարելավող կարևորագույն գործոններից մեկն է:

Զբոսաշրջության դերն առավելապես կարևոր է զարգացող երկրներում, և բժշկական զբոսաշրջությունը կարող է դառնալ այն հիմնական խթաններից մեկը, որը զբոսաշրջային հոսքեր կապահովի ինչպես բժշկական, այնպես էլ զբոսաշրջության այլ ձևերի համար:

Մեթոդաբանությունը և մեթոդները: Օգտագործվել են բժշկական և զբոսաշրջային միջազգային կազմակերպությունների վերլուծությունները, գնահատման մեթոդները և մոտեցումները:

Առողջության պահպանումը և կենսագործունեության աճը ժամանակակից հասարակության արժեհամակարգի գլխավոր հիմնախնդիրներից են: Աճում է նաև այն մարդկանց թիվը, ովքեր ցանկանում են կամ կարիք ունեն ստանալու բարձր որակի բժշկական օգնություն:

Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) բնութագրման՝ մարդու առողջությունը սոցիալ-կենսաբանական ու հոգեկան լրիվ բարօրության վիճակն է, երբ օրգանիզմի բոլոր օրգանների ու համակարգերի ֆունկցիաները բնակլիմայական ու սոցիալական միջավայրի հետ գտնվում են հավասարակշռված վիճակում, և երբ բացակայում է որևէ հիվանդություն, ախտաբանական վիճակ ու ֆիզիկական թերություն: Մարդու առողջական վիճակը բնորոշվում է նրա ֆիզիոլոգիական համակարգերի ու օրգանների ֆունկցիաներով՝ կապված տարիքային, սեռային ու հոգեբանական գործոնների և արտաքին միջավայրի բնակլիմայական ու սոցիալական պայմանների հետ: Բնակչության ժողովրդագրական կազմի փոփոխությունները բնութագրվում են բնակչության ծերացումով, որը առաջացնում է լրացուցիչ բժշկական ծառայությունների կարիք: Սրան զուգահեռ համաճարակային հիվանդությունների փոփոխությունները և քրոնիկ հիվանդությունների տարածման ծավալները հանգեցրել են բժշկական օգնության պահանջարկի աճին [8]: Առողջապահության գլոբալիզացիան խթանող առանձնա-

հատկությունները ներառում են բազմազգ հիվանդանոցները, մրցունակ գներն աշխարհում, համաշխարհային ստանդարտները և մասնագիտացված տեխնոլոգիաները [2]: Առողջապահության գլոբալիզացիայի ամենակարևոր հետևանքներից մեկը զբոսաշրջության նոր ձևի առաջացումն է, որը հայտնի է որպես ռեկրեացիոն զբոսաշրջություն [3]:

Ռեկրեացիոն զբոսաշրջությունը զբոսաշրջության ինդուստրիայի ամենահին տեսակներից մեկն է: Թերմալ ջրերի բուժիչ օգտակար հատկությունները հայտնի են դեռևս հին ժամանակներից, երբ մարդիկ բացահայտեցին ջրի կարևորությունը՝ որպես մարդու կյանքի էական տարր, և առաջին քաղաքակրթությունները կառուցվեցին ծովերի և գետերի մոտ [1]: Նրա վաղ սահմանումները ներառում էին 1973 թ.-ի Պաշտոնական զբոսաշրջային կազմակերպությունների միջազգային միության սահմանումը (IUOTO - Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության նախորդը), որտեղ նշվում էր, որ ռեկրեացիոն զբոսաշրջությունը «երկրի բնական ռեսուրսների, մասնավորապես հանքային ջրի և կլիմայի օգտագործմամբ առողջապահական հաստատությունների ապահովումն է» [4]:

Բժշկական զբոսաշրջությունը սահմանվում է որպես գործընթաց, որի միջոցով հիվանդները մեկնում են տարբեր երկրներ՝ ստանալու որակյալ և համապատասխան գներով բժշկական օգնություն: Այն ռեկրեացիոն զբոսաշրջությունից տարբերվում է երեք պատճառով.

- Նախ՝ ռեկրեացիոն զբոսաշրջության (առողջության և վելնես) ծառայություններն իրականացվում են ոչ հիվանդանոցային պայմաններում, մինչդեռ բժշկական զբոսաշրջային ծառայություններն իրականացվում են հիվանդանոցային համատեքստում:
- Երկրորդ՝ բժշկական զբոսաշրջության դեպքում բուժումը իրականացվում է դեղերով և վիրաբուժական պրոցեդուրաներով, մինչդեռ առողջապահական զբոսաշրջության ոլորտում միջամտությունն իրականացվում է առողջության վերականգնման համար լրացուցիչ բուժման միջոցներով:
- Երրորդ՝ բժշկական զբոսաշրջության պայմաններում հիվանդները բուժվում են հիվանդանոցում առաջարկվող միջոցների օգտագործմամբ [10]:

Ի տարբերություն դասական դեստինացիոն զբոսաշրջության, որտեղ ճանապարհորդությունը հիմնական կարևորությունն է, բժշկական զբոսաշրջության համար սպառողի հիմնական դրդապատճառը հատուկ բժշկական օգնության ստացումն է: Այսպիսով, ճանապարհորդության տարրերը սոսկ

այդ ծառայությունների ապահովման ուղին են [11]: Ըստ Բժշկական զբոսաշրջության ասոցիացիայի (Medical Tourism Association,[12])՝ բժշկական զբոսաշրջության ընթացքում մարդիկ իրենց մշտական բնակչության վայրից ճանապարհորդում են մեկ այլ երկիր՝ բժշկական, ատամնաբուժական կամ վիրահատական խնամք ստանալու նպատակով, միևնույն ժամանակ սպասելով իրենց հայրենիքում բուժվելուն հավասար կամ ավելի լավ բուժում, և բժշկական նպատակներով ճանապարհորդում են ծառայությունների մատչելիության, բուժման ավելի լայն հնավորությունների և բուժման բարձր որակի համար:

Ռեկրեացիոն զբոսաշրջության ենթախմբում բժշկական զբոսաշրջությունը կարելի է համարել առողջապահական ինդուստրիայի արագ աճի արդյունք, այն կցված է ռեկրեացիոն զբոսաշրջության ավելի լայն հեռանկարին: Շատ երկրներում դա ներառում է ավելի հին նախապատմություն ունեցող ափամերձ տարածքները, սպա քաղաքները և շատ այլ բուժական լանդշաֆտներ:

Բժշկական զբոսաշրջության համար համաձայնեցված սահմանում չկա, քանի որ երկրների կողմից կիրառվող մոտեցումները էականորեն տարբերվում են [13]: Շատ երկրներ հաշվում են օտարերկրյա հիվանդների այցերը հիվանդանոցներ, իսկ մյուսները հաշվում են առանձին հիվանդների մուտքը երկիր: Այլ երկրներ գրանցում են ազգությունը, բայց ոչ հիվանդների բնակության վայրը, ինչը կարող է լինել խնդրահարույց, երբ միգրանտները վերադառնում են իրենց հայրենի երկիր՝ բուժման համար:

Բժշկական զբոսաշրջության այս բնորոշումը նույնպես շատ լայն է և ավելի շատ համապատասխանում է ռեկրեացիոն զբոսաշրջության կոնցեպտին. «Բժշկական զբոսաշրջությունը լայն տերմին է, որը ներառում է ճանապարհորդություն՝ անձի ֆիզիկական կամ հոգեկան բարեկեցությունը բարելավող տարբեր տեսակի բուժումներ ստանալու համար՝ սկսած բժշկական միջամտությունից (ընտրովի կամ անհրաժեշտ), ավանդական և այլընտրանքային բուժումներից մինչև սպա և առողջարաններ» [7]:

Բժշկական զբոսաշրջությունը առաջնորդվում և ձևավորվում է բազում բժշկական, տնտեսական, սոցիալական և քաղաքական ուժերի բարդ փոխազդեցությունների միջոցով: Այնուամենայնիվ, այն պատճառները, թե ինչու են հիվանդները ընտրում հազարավոր մղոններ ճանապարհորդել, հաճախակի անցնելով ազգային սահմանները, կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

- խնամքի մատչելիություն,
- խնամքի ոչ սեզոնային բնույթ,
- խնամքի հասանելիություն,
- հիվանդների նախապատվությունը կոնկրետ մատակարարների նկատմամբ,
- հիվանդի նախապատվությունը որոշակի աշխարհագրական վայրերի նկատմամբ:

Մերօրյա հասարակության մեջ յուրաքանչյուր շուկա անցնում է սպառողակենտրոն գործելաոճին, և առողջապահության ոլորտը նույնպես մասնակցում է այդ գործընթացին [5]: Առողջապահության և բժշկական զբոսաշրջության շուկան արագորեն աճում է ինչպես ծառայությունների, այնպես էլ սպառողների մասով [6]: Բժշկական զբոսաշրջությունը ստեղծում է նոր հնարավորություններ՝ ի լրումն զանգվածային զբոսաշրջության նշանակալի հաջողությունների: Դա այլընտրանք է, որը կարող է նպաստել զբոսաշրջային արտադրանքի դիվերսիֆիկացմանը:

Եզրակացություններ

- Բժշկական զբոսաշրջության կոնցեպտը՝ որպես բժշկական նպատակով կատարվող ճանապարհորդությունների ամբողջություն, գրավում է նրանց, ովքեր հետաքրքրված են բարձրորակ և մատչելի առողջապահական ծառայություններով:
- Բժշկական զբոսաշրջությունը ստեղծում է նոր հնարավորություններ՝ ի լրումն զանգվածային զբոսաշրջության նշանակալի հաջողությունների: Դա այլընտրանք է, որը կարող է նպաստել զբոսաշրջային արտադրանքի դիվերսիֆիկացմանը:
- Բժշկական զբոսաշրջությունը տնտեսական կարևոր դեր կարող է խաղալ առողջապահական բազմաթիվ խնդիրների լուծման գործում:

Օգտագործված գրականության ցանկ

1. History of the Baths and Thermal Medicine. Serena Gianfaldoni, Georgi Tchernev,Uwe Wollina, Maria Grazia Roccia, Massimo Fioranelli, and Torello Lotti. University G. Marconi of Rome, Dermatology and Venereology. 2017

2. Cook PS. What is health and medical tourism? *The Annual Conference of the Australian Sociological Association*. The University of Melbourne, Victoria; 2008.

3. Heung VCS, Kucukusta D, Song H. Medical tourism development in Hong Kong: An assessment of the barriers. *Tourism Manage*. 2011;**32**(5):995-1005.

4. Iternational Union of Official Travel Organizations (IUOTO) (1973), Health Tourism, UN, Geneva.

5. Kim, Y. K., Cho, C. H., Ahn, S. K., Goh, I. H., & Kim, H. J. (2008). A study on medical services quality and its influence upon value of care and patient satisfaction– Focusing upon outpatients in a large-sized hospital. Total Quality Management, 19(11), 1155-1171.

6. Mair, H. (2005). Tourism, health and the pharmacy: Towards a critical understanding of health and wellness tourism. Tourism (Zagreb), 53(4), 335-346.

7. Paffhausen, A.L.; Peguero, C. and Roche-Villarreal, L. (2010), Medical Tourism: A Survey, ECLAC, Washington (online), հասանելի է: wiwi.uni-passau. De /fileadmin/ dokumente/ lehrstuehle/ grimm/Publikationen/Medical_Tourism_A_-Survey_L111_final.pdf (19.11.2019)

8. Simons, M. P., Pike, B. L., Hulseberg, C. E., Prouty, M. G., & Swierczewski, B. E. (2016). Norovirus: new developments and implications for travelers' diarrhea. Tropical Diseases, Travel Medicine and Vaccines, 2(1).

9. World Health Organization (2013a), Medical Tourism (online), available at: www. who.int/ global_health_ histories/seminars/kelley_presentation_medical_-tourism.pdf (19-07-2017)

10. Lunt NT, Mannion R, Exworthy M. A framework for exploring the policy implications of UK medical tourism and international patient flows. Soc Policy Admin. 2013

11. Singh, N. (2013). Exploring the factors influencing the travel motivations of US medical tourists. Current Issues in Tourism, 16(5), 436-454.

12. https://medicaltourismassociation.com/en/index.html

13. World Health Organization (2013a), Medical Tourism (online), available at: www.who.int/global_
health_histories/seminars/kelley_presentation_medical_tourism.pdf (19-07-2017)

THEORETICAL FOUNDATIONS FOR THE DEVELOPMENT OF MEDICAL TOURISM

SARGSYAN LILIT
Assistant at the Chair of Service, YSU
e-mail: Lilit.argsyan@mail.ru
VARDANYAN MARIANNA
Master Student at the Chair of Service, YSU
e-mail: mariannvard@gmail.com

In the activity of recreational tourism, a new direction of medical tourism has been formed. The article is devoted to medical tourism, its identification with recreational tourism and presented by the theoretical studies which clarify the features of medical tourism. A number of definitions of medical tourism and its differences from recreational tourism are also presented. The concept of medical tourism as a holistic medical journey appeals to those who are interested in quality, affordable medical services. It creates new opportunities in addition to the significant success of mass tourism. This is an alternative that can contribute to the diversification of tourism products, can play an important economic role in solving many health problems. Improving medical tourism will enable low-income countries to enter the global tourism industry and tends to become one of the leading tourism industries in both developed and developing countries. Medical tourism can play an important role in the main types of tourism for Armenia, which has great development prospects due to the quality of personnel, resources, as well as competitive prices in the market.

Keywords: recreational tourism, medical services, healthcare, illness, wellness tourism.

ТЕОРЕТИЧЕСКИЕ ОСНОВЫ РАЗВИТИЯ МЕДИЦИНСКОГО ТУРИЗМА

САРКИСЯН ЛИЛИТ
Ассистент кафедры сервиса ЕГУ
электронная почта: Lilit.argsyan@mail.ru
ВАРДАНЯН МАРИАННА
Магистр кафедры сервиса ЕГУ
электронная почта: mariannvard@gmail.com

В деятельности рекреационного туризма сформировалось новое направление медицинский туризм. Статья посвящена медицинскому туризму, его

отождествлению с рекреационным туризмом и представленные теоретические исследования уточняют особенности медицинского туризма. Также представлены ряд определений медицинского туризма и его отличия от рекреационного туризма. Понятие медицинского туризма как целостного медицинского путешествия привлекает тех, кто заинтересован в качественных, доступных медицинских услугах. Оно создает новые возможности в дополнение к значительному успеху массового туризма. Это альтернатива, которая может способствовать диверсификации туристических продуктов, может сыграть важную экономическую роль в решении многих проблем со здоровьем. Улучшение медицинского туризма позволит странам с низким доходом войти в глобальную индустрию туризма и имеет тенденцию стать одной из ведущих отраслей туризма как в развитых, так и в развивающихся странах. Он еще может сыграть важную экономическую роль в решении многих проблем со здоровьем.Медицинский туризм может сыграть важную роль в основных видах туризма для Армении, которая имеет большие перспективы развития благодаря качеству кадров, ресурсов, а также конкурентоспособным ценам на рынке.

Ключевые слова: *рекреационный туризм, медицинские услуги, здравоохранение, болезнь, здоровительный туризм.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 10.04.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 16.04.2022թ.: